Պատասխաններ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2024-2025 ուս. տարի
10 – րդ դասարան

1. ա-ճիշտ; բ-սխալ; գ-սխալ; դ-սխալ; ե-ճիշտ; զ-սխալ; է-սխալ; ը-ճիշտ (յուր.՝ **0.25միավոր**)

2. Սինգապուր (**1միավոր**)

3. բ. կարստային (**1միավոր**)

4. Գծագիրը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք (օրինակ այունաձև տրամագիր): Բովանդակային ցանկացած սխալի դեպքում **միավոր չի տրվում**: Զուտ տեխնիկական թերացումների պարագայում կարող է տրվել առավելագույնը **0.5միավոր**



ա. Ընդլայնված վերարտադրության ռեժիմ ունեցող երկիրը վերածվել է դեպոպուլյացիա ունեցող երկրի: Ճիշտ համարել նաև վերարտադրության երկրորդ տիպի երկիրը դարձել է առաջին տիպի երկիր կամ ժողովրդագրական գարունից ժողովրդագրական ձմեռ բնորոշումները (**1միավոր**):

բ. Երկու բացասական հետևանքներից կարող են ներկայացնել ազգի ծերացումը, երիտասարդների հարկային բեռի ավելացումը, կրթական հաստատությունների թերբեռնվածությունը, բուժհաստատությունների բեռնվածության աճը, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում աշխատուժի պակասը (**1միավոր**):

5. ա. K=O/N, հետևաբար K=0.8 (**0.5միավոր**): Ցանկացած սխալի դեպքում, խնդիրը համարվում է սխալ լուծված և միավոր չի տրվում:

Այս գործակիցը համապատասխանում է անտառի կամ բարձրախոտային սավաննայի (ցանկացածի դեպքում շնորհել **0.5միավոր**) Ընդունել նաև անտառատափաստան տարբերակը:

բ. 1000000հա x 70%/100%=**700000հա** (միայն այս քայլը կատարելու դեպքում շնորհել **0.25միավոր**)

Ակտիվ հողերի բաժինը=25%+5%=**30%** (այս քայլի համար ավելացնել ևս **0.25միավոր**)

Ակտիվ հողերի մակերեսը = **700000հա x 30%/100% = 210000հա (ևս 0.5միավոր)**

6. ա. Ճիշտ համարել նշված տարբերակներից ցանկացած չորսը՝ Ալմադի կամ Կանաչ հրվանդանի, Գալլինաս կամ Գալինյաս, Ուելսի արքայազնի, Մերչիսոնի, Սենտ Չարլզ, Մարյատո, Դեժնյով, Ռոկա

բ. Կուբա, Հայիթի, Ճամայկա, Պուերտո Ռիկո

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ **0.25միավոր**: Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ նշված պատասխանի դեպքում միավորը նվազեցնել 0.25-ով:

7. Եփրատ, Տիգրիս, Կուր, Արաքս

Յուրաքանչյուր դիրքում ճիշտ պատասխանը նշելու պարագայում աշակերտին շնորհել **0.25միավոր:**

8. ա. Հյուսիսային կիսագնդում այսբերգները հիմնականում անջատվում են Գրենլանդիայից, իսկ հարավային կիսագնդում՝ Անտարկտիդայից: Օվկիանոսներով և ծովերով դրանց տեղաշարժը պայմանավորված է քամիներով և օվկիանոսային հոսանքներով: Քանի որ Անտարկտիդայի շուրջ Արևմտյան քամիների հոսանքը գոտևորում է Երկրագունդը և հոսում է

զուգահեռականի ուղղությամբ՝ այն հիմնականում որսում է այսբերգներն ու դրանց տեղաշարժում հորիզոնական ուղղությամբ՝ սահմանափակելով դեպի ավելի հյուսիս տեղաշարժը: Մինչդեռ Գրանլանդիայի ափերի մոտով հոսող Լաբրադորյան հոսանքը այսբերգները տեղաշարժում է դեպի հարավ:

բ. Երկրները ժամային գոտիների սահմանները հարմարեցնում են ներքին վարչատարածքային և վարչաքաղաքական միավորների սահմաններին կառավարման գործընթացը ավելի դյուրին դարձնելու և սոցիալ-տնտեսական գործունեության ընթացքում ավելորդ խառնաշփոթից խուսափելու համար (յուրաքանչյուրը՝ **0.5միավոր**):

9. ա. 20մ (**0.5միավոր**)

բ. B: A կետը տեղակայված է 360մ և 380մ հորիզոնականների միջև, իսկ B կետը՝ 420մ հորիզոնականից վեր (**0.5միավոր**): Եթե թվերը նշված չէն, սակայն տրված է աշխարհագրական գրագետ հիմնավորում՝ հստակ մեկնաբանելով այդ պատկերում առկա ռելիեֆի փոփոխման ընդհանուր բնույթը, տալ **0.5միավոր**:

գ. 40մ/2կմ=20մ/կմ: (**1միավոր**)

10. ա. Սուբդուկցիան մայրցամաքային և օվկիանոսային սալերի բախման հետևանքով օվկիանոսային սալի՝ մայրցամաքայինի տակ սուզվելու երևույթն է **(0.5միավոր)**: Իմաստային ճիշտ պատասխանների դեպքում շնորհել լիարժեք միավոր:

Սուբդուկցիայի ընդարձակ գոտի է Հարավային Ամերիկայի արևմուտքը **(0.5միավոր)**: Ընդունել նաև Հյուսիսային Ամերիկա պատասխանը:

բ. Սուբդուկցիայի գոտիներում վառ արտահայտված են ինչպես հզոր երկրաշարժերը, այնպես էլ հրաբխականությունը **(յուր.՝ 0.5միավոր)**: Ընդունել մասնավոր դեպք ցունամի պատասխանը ևս:

11. Ա- 4; Բ- 3; Գ- 1; Դ- 2